# ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2020 թվականի փետրվարի 26-ի

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻՆ) ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈՅՈՎ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԱՆՎՃԱՐ ԵՎ ՎՃԱՐՈՎԻ ԵԹԵՐԱԺԱՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 74 -Ա

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով և 118-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով՝ Արցախի Հանրապետության կենտրոնական հանձնաժողովը **ո ր ո շ ո ւ մ** է.

1. Սահմանել Արցախի Հանրապետության նախագահի և Ազգային ժողովի 2020 թվականի մարտի 31-ի հերթական ընտրություններին մասնակցելու նպատակով ընտրական ցուցակ ներկայացրած կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) նախընտրական քարոզչության ժամանակ՝

1) Արցախի հանրային ռադիոյով և հանրային հեռուստատեսությամբ անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու կարգը՝ համաձայն N1 հավելվածի.

2) Արցախի հանրային ռադիոյով անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու ժամանակացույցը՝ համաձայն N2 հավելվածի.

3) Արցախի հանրային հեռուստատեսությամբ անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու ժամանակացույցը՝ համաձայն N3 հավելվածի:

2. Հաստատել Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2020 թվականի փետրվարի 26-ի նիստում անցկացված վիճակահանությունների արդյունքներով որոշված հերթականությամբ Արցախի հանրային հեռուստառադիոընկերության անվճար և վճարովի հեռուստառադիո-եթերաժամերից օգտվելու՝ ընտրական ցուցակ ներկայացրած կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից նախընտրական քարոզչություն իրականացնելու վիճակահանությունների արդյունքների արձանագրությունը :

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ս.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

2020 թվականի փետրվարի 26
ք.Ստեփանակերտ

Հավելված N 1
Արցախի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2020 թվականի փետրվարի 26-ի N 74-Ա որոշման

# ԿԱՐԳ

## ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻՆ) ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈՅՈՎ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԱՆՎՃԱՐ ԵՎ ՎՃԱՐՈՎԻ ԵԹԵՐԱԺԱՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Արցախի Հանրապետության նախագահի և Ազգային ժողովի 2020 թվականի մարտի 31-ի հերթական ընտրություններին մասնակցելու նպատակով ընտրական ցուցակ ներկայացրած կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) (այսուհետ՝ կուսակցություն (կուսակցությունների դաշինք) նախընտրական քարոզչության ժամանակ Արցախի հանրային ռադիոյով և հանրային հեռուստատեսությամբ անվճար և վճարովի եթերաժամ տրամադրվում է հավասար հիմունքներով՝ Արցախի Հանրապետության ընտրական օրենսգրքի և սույն կարգի պահանջներին համապատասխան:

2. Կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով եթերաժամ տրամադրվում է՝

1) Արցախի հանրային ռադիոյով՝ ժամը 14:00-ից մինչև 19:00-ն ընկած ժամանակահատվածում՝ սույն որոշման հավելված N2-ով սահմանված ժամանակացույցին համապատասխան.

2) Արցախի հանրային հեռուստատեսությամբ՝ ժամը 16:00-ից մինչև 24:00-ն ընկած ժամանակահատվածում՝ սույն որոշման հավելված N3-ով սահմանված ժամանակացույցին համապատասխան:

3. Կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) Արցախի հանրային ռադիոյով տրամադրվում է ոչ ավելի, քան 120 րոպե անվճար և ոչ ավելի, քան 180 րոպե վճարովի եթերաժամ, ընդ որում՝ բոլոր կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) 9-ական անգամ անվճար և վճարովի հիմունքներով՝ 2020 թվականի փետրվարի 27-ից մինչև մարտի 29-ը ներառյալ, այդ թվում՝

1) 2020թվականի փետրվարի 27-ին և մարտի 29-ին բոլոր կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) 11-ական րոպե անվճար հիմունքներով,

2) 2020 թվականի փետրվարի 29-ից մինչև մարտի 28-ը ներառյալ յուրաքանչյուր կուսակցության (կուսակցությունների դաշինքի) 14-ական րոպե անվճար և 20-ական րոպե վճարովի հիմունքներով:

4. Կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) Արցախի հանրային հեռուստատեսությամբ տրամադրվում է ոչ ավելի, քան 60 րոպե անվճար և ոչ ավելի, քան 120 րոպե վճարովի եթերաժամ, ընդ որում՝ բոլոր կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) 9 անգամ անվճար և 8 անգամ վճարովի հիմունքներով՝ 2020 թվականի փետրվարի 27-ից մինչև մարտի 29-ը ներառյալ, այդ թվում՝

1) 2020 թվականի փետրվարի 27-ին՝ բոլոր կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) 8-ական րոպե անվճար հիմունքներով,

2) 2020 թվականի մարտի 29-ին՝ բոլոր կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) 10-ական րոպե անվճար հիմունքներով,

3) 2020 թվականի փետրվարի 28-ից մինչև մարտի 28-ը ներառյալ յուրաքանչյուր կուսակցության (կուսակցությունների դաշինքի) 6-ական րոպե անվճար և 15-ական րոպե վճարովի հիմունքներով:

5. Նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով ռադիոեթերաժամը տրամադրվում է հանրային ռադիոընկերության 102.3 հաճախությամբ, իսկ հեռուստատեսային եթերաժամը՝ հանրային հեռուստաընկերության <<ԱՀ>> ալիքի եթերում՝ ապահովելով հեռարձակում Արցախի Հանրապետության ողջ տարածքում:

6. Եթերաժամը տրամադրվում է ըստ սույն կարգի 8-րդ կետում նշված ժամկետում նախապես ներկայացված հայտերի՝ Արցախի հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության և կուսակցության (կուսակցությունների դաշինքի) միջև սույն կարգին համապատասխան կնքված պայմանագրի հիման վրա, որը բոլոր պատվիրատուների համար պետք է սահմանի հավասար պայմաններ:

7. Եթերաժամ տրամադրելու համար պայմանագիր կնքելիս կուսակցության (կուսակցությունների դաշինքի) անունից կարող է հանդես գալ կուսակցության (կուսակցությունների դաշինքի)՝ Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովում գրանցված լիազոր ներկայացուցիչը կամ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) կողմից լիազորված այլ անձ: Պայմանագիր կնքելու համար ներկայացվում է կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազոր ներկայացուցչի վկայականի պատճենը կամ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) կողմից տրված լիազորագիրը, լիազոր ներկայացուցչի կամ լիազորված անձի անձնագիրը, վճարովի հիմունքներով եթերաժամից օգտվելու համար՝ նաև Արցախի Հանրապետության տարածքում գործող որևէ առևտրային բանկում բացված՝ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) նախընտրական հիմնադրամի ժամանակավոր հատուկ հաշվեհամարը: Պայմանագիր կնքելու համար պետք է դիմել Արցախի հեռուստառադիոընկերություն, հասցեն՝ք. Ստեփանակերտ, Տիգրան Մեծ 23ա, հեռախոսներ՝ 047 94-08-09 (ռադիո), 047 94-38-48 (հեռուստատեսություն):

8. Ձայներիզները, տեսանյութերը՝ կրիչով, կամ եթեր մտնելու այլ ձևի մասին նախնական ծանուցումը Արցախի հանրային ռադիո և հանրային հեռուստատեսություն ներկայացվում են ոչ ուշ, քան համապատասխան նյութը հեռարձակելու օրվա ժամը 13:00-ն:

9. Արցախի հանրային ռադիոյի կամ հանրային հեռուստատեսության եթերաժամը սույն որոշման համապատասխանաբար N2 և N3 հավելվածներով սահմանված ժամանակացույցերին համապատասխան չօգտագործելու դեպքում կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) դրա փոխարեն այլ եթերաժամ չի տրամադրվում և կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) տրամադրված եթերաժամն այլ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) կամ նրա ներկայացուցչի կողմից օգտագործվել չի կարող:

10. Արցախի հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության վճարովի հիմունքներով եթերաժամից օգտվելու համար վճարումները կատարվում են կուսակցության (կուսակցությունների դաշինքի) հիմնադրամի միջոցներից՝ անկանխիկ (փոխանցումով):

11. Արցախի հանրային ռադիոյի կամ հանրային հեռուստատեսության կողմից կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) վճարովի հիմունքներով եթերաժամ տրամադրվում է, եթե մինչև եթերաժամի սկիզբը համապատասխանաբար Արցախի հանրային ռադիո կամ հանրային հեռուստատեսություն ներկայացվել է Արցախի Հանրապետության տարածքում գործող որևէ առևտրային բանկի անկանխիկ վճարման (փոխանցման) հանձնարարականը:

12. Նախընտրական քարոզչությանը վերաբերող ռադիոհաղորդումները և հեռուստահաղորդումները վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնելիս ձայնագրվում և տեսագրվում են: Դրանք պահպանվում են առնվազն երեք ամիս:

13. Արգելվում է նախընտրական քարոզչությանը վերաբերող ռադիոհաղորդումները և հեռուստահաղորդումներն ընդմիջել առևտրային գովազդով:

Հավելված N 2
Արցախի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2020 թվականի փետրվարի 26-ի N 74-Ա որոշման

## ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

## ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻՆ) ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈՅՈՎ ԱՆՎՃԱՐ ԵՎ ՎՃԱՐՈՎԻ ԵԹԵՐԱԺԱՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

| Հ/Հ | Օրը, ամիսը | «Ազգային վերածնունդ» կուսակցություն | «Անկախության Մերունդ» կուսակցություն | Արցախի հեղափոխական կուսակցություն | Միացյալ Հայաստան կուսակցություն | Արցախի Պահպանողական կուսակցություն | «Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուս-ն | Արցախի «Արդարություն» կուսակցություն | «ՆՈՐ ԱՐՑԱԽ» կուս-րի դաշինք | ԼՂ Կոմունիստական կուսակցություն | Արցախի Ժողովրդավարական կուս-ն | «Միասնական հայրենիք» կուսակցություն | «Ազատ Հայրենիք-ՔՄԴ» կուս-րի դաշինք |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | N 1 | N 2 | N 3 | N 4 | N 5 | N 6 | N 7 | N 8 | N 9 | N 10 | N 11 | N 12 |
| 1. | 27.02 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 2. | 28.02 | + | + | | + | + | | + | + | | + | | + |
| 3. | 29.02 | | - | + | - | | + | - | | - | - | + | - |
| 4. | 01.03 | - | | - | | | - | | + | + | | - | |
| 5. | 02.03 | + | + | | + | - | + | | - | | + | | |
| 6. | 03.03 | | - | + | | | - | + | | - | | + | + |
| 7. | 04.03 | | | - | - | + | | - | + | | | - | - |
| 8. | 05.03 | + | + | | + | | | | - | + | + | | |
| 9. | 06.03 | - | | | | - | + | | | | - | + | |
| 10. | 07.03 | | - | + | | | | - | | | | - | + |
| 11. | 08.03 | + | | - | + | + | | + | | - | | | - |
| 12. | 9.03 | | + | | - | | + | | + | + | + | | |
| 13. | 10.03 | | - | + | | - | - | | | | - | + | + |
| 14. | 11.03 | - | | - | + | + | + | + | - | + | | | + |
| 15. | 12.03 | + | + | | | | | - | + | | | | - |
| 16. | 13.03 | | | + | | - | | | | - | + | + | |
| 17. | 14.03 | | - | | - | | - | + | - | + | | - | |
| 18. | 15.03 | - | | | + | + | + | | | | - | | |
| 19. | 16.03 | + | + | - | | | | - | + | | | | + |
| 20. | 17.03 | | | + | | | - | | | - | + | + | - |
| 21. | 18.03 | | | | - | - | | + | - | | | | |
| 22. | 19.03 | + | | + | + | + | + | | | + | - | - | |
| 23. | 20.03 | - | + | | | | - | | + | | | + | + |
| 24. | 21.03 | | - | | - | + | | + | - | | + | | - |
| 25. | 22.03 | | | - | | - | | - | | - | | | |
| 26. | 23.03 | - | + | + | | | + | | | + | - | + | |
| 27. | 24.03 | + | | | | + | - | | + | | + | - | |
| 28. | 25.03 | | - | | + | | | + | | - | | | + |
| 29. | 26.03 | - | | | - | - | | | - | + | | | - |
| 30 | 27.03 | | | - | + | + | | - | + | | - | - | + |
| 31 | 28.03 | + | + | + | | | + | + | | + | + | + | |
| 32 | 29.03 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |

Ծանոթություն_Աղյուսակում «-» նշանով նշագրված է անվճար եթերաժամը, «+» նշանով՝ վճարովի եթերաժամը:

Հավելված N 3
Արցախի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2020 թվականի փետրվարի 26-ի N 74-Ա որոշման

## ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

## ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻՆ) ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԱՆՎՃԱՐ ԵՎ ՎՃԱՐՈՎԻ ԵԹԵՐԱԺԱՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

| Հ/Հ | Օրը, ամիսը | «Ազգային վերածնունդ» կուսակցություն | «Անկախության Մերոնք» կուսակցություն | Արցախի «Արդարություն» կուսակցություն | «Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն | Արցախի հեղափոխական կուսակցություն | Արցախի Ժողովրդավարական Կուս-ն | «Միասնական հայրենիք» կուսակցություն | Միացյալ Հայաստան կուսակցություն | «ՆՈՐ ԱՐՑԱԽ» կուս-ի դաշինք | ԼՂ Կոմունիստական կուսակցություն | Արցախի Պահպանողական կուսակցություն | «Հայաստանի Քրիստոնյա-դեմոկրատական կուս-ի դաշինք» |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | N 1 | N 2 | N 3 | N 4 | N 5 | N 6 | N 7 | N 8 | N 9 | N 10 | N 11 | N 12 |
| 1. | 27.02 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 2. | 28.02 | + | + | | + | + | | + | + | | + | | + |
| 3. | 29.02 | | - | + | - | | + | - | | - | - | + | - |
| 4. | 01.03 | - | | - | | | - | | + | + | | - | |
| 5. | 02.03 | + | + | | + | - | + | | - | | + | | |
| 6. | 03.03 | | - | + | | | - | + | | - | | + | + |
| 7. | 04.03 | | | - | - | + | | - | + | | | - | - |
| 8. | 05.03 | + | + | | + | | | | - | + | + | | |
| 9. | 06.03 | - | | | | - | + | | | | - | + | |
| 10. | 07.03 | | - | + | | | | - | | | | - | + |
| 11. | 08.03 | + | | - | + | + | | + | | - | | | - |
| 12. | 9.03 | | + | | - | | + | | + | + | + | | |
| 13. | 10.03 | | - | + | | - | - | | | | - | + | + |
| 14. | 11.03 | - | | - | + | + | + | + | - | + | | | + |
| 15. | 12.03 | + | + | | | | | - | + | | | | - |
| 16. | 13.03 | | | + | | - | | | | - | + | + | |
| 17. | 14.03 | | - | | - | | - | + | - | + | | - | |
| 18. | 15.03 | - | | | + | + | + | | | | - | | |
| 19. | 16.03 | + | + | - | | | | - | + | | | | + |
| 20. | 17.03 | | | + | | | - | | | - | + | + | - |
| 21. | 18.03 | | | | - | - | | + | - | | | | |
| 22. | 19.03 | + | | + | + | + | + | | | + | - | - | |
| 23. | 20.03 | - | + | | | | - | | + | | | + | + |
| 24. | 21.03 | | - | | - | + | | + | - | | + | | - |
| 25. | 22.03 | | | - | | - | | - | | - | | | |
| 26. | 23.03 | - | + | + | | | + | | | + | - | + | |
| 27. | 24.03 | + | | | | + | - | | + | | + | - | |
| 28. | 25.03 | | - | | + | | | + | | - | | | + |
| 29. | 26.03 | - | | | - | - | | | - | + | | | - |
| 30 | 27.03 | | | - | + | + | | - | + | | - | - | + |
| 31 | 28.03 | + | + | + | | | + | + | | + | + | + | |
| 32 | 29.03 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |

Ծանոթություն_Աղյուսակում «-» նշանով նշագրված է անվճար եթերաժամը, «+» նշանով՝ վճարովի եթերաժամը: